

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013 թվականի դեկտեմբերի 14-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2014 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2014 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2014 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերը սկսվելու են 2014 թ-ի հունվարի 8-ին և ավարտվելու են հունվարի 21-ին, իսկ առաջին և երկրորդ կուրսերի համար՝ հունվարի 30-ին: Ստուգարքներն անցկացվելու են հունվարի 22, 23, 24-ին, իսկ քննությունները՝ 25, 26, 27, 28, 29-ին: Բաց դրների օրը լինելու է հունվարի 30-ին: Առաջին և երկրորդ կուրսերի համար քննաշրջանը լինելու է փետրվարի 7-ից մարտի 7-ն ընկած ժամանակահատվածում:

Գավառի պետական համալսարանի համացանցային կայքում տեղադրվել են դասացուցակը, հայտարարությունները:

Նշվեց նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարին և ոստիկանապետին ուղարկվել է գրություն՝ համապատասխան ստորաբաժանումների ուսանող աշխատակիցներին դասերին մասնակցության թույլտվության վերաբերյալ:

Որոշեցին – Համալսարանում գործող կանոնակարգի համաձայն՝ միջանկյալ քննություններին մասնակցելու իրավունք վերապահել միայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը վճարած ուսանողներին:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան